Հաստատված է
ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի
2002 թ. հունվարի 30-ի № 4 որոշմամբ

Կ Ա Ր Գ

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման

Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում, «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքին համապատասխան, սույն կարգի 2.1 կետով սահմանված գործունեության տեսակների իրականացման համար լիցենզիայի հայտի ընդունման, քննարկման, լիցենզիայի տրման (մերժման), լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի կորստի դեպքում կրկնօրինակի տրամադրման ընթացակարգերը:

Սույն կարգը չի տարածվում էլեկտրական էներգիայի և բնական գազի ներկրման ու արտահանման գործունեությունների լիցենզավորման վրա:

1. Կարգում օգտագործված հիմնական հասկացությունները

Սույն կարգում մեծատառով գրված հասկացությունները սահմանվում են հետևյալ կերպ.

Անձ՝ իրավաբանական անձ.

Էներգետիկայի բնագավառ՝ հասարակական ծառայություններ մատուցելու համար էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրության՝ ներառյալ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության, էլեկտրական« ջերմային էներգիայի ու բնական գազի հաղորդման (փոխադրման) և բաշխման, էլեկտրաէներգետիկական ու բնական գազի ոլորտների համակարգի օպերատորի ծառայությունների իրականացման, էլեկտրաէներգետիկայի և ջերմաէներգետիկայի ոլորտներում նոր արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման, ինչպես նաև էլեկտրաէներգետիկայի, ջերմաէներգետիկայի ու բնական գազի ոլորտներում հաղորդման (փոխադրման) կամ բաշխման ցանցի կառուցման, էլեկտրական էներգիայի և բնական գազի ներկրման և արտահանման

գործունեության մեջ ներգրավված տնտեսավարող սուբյեկտների (անկախ սեփականության ձևից)՝ այդ գործունեության իրականացման համար անհրաժեշտ գույքի և էներգետիկական շուկային ծառայություններ մատուցող կառույցների համախումբ.

Հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողով.

Լիցենզիա՝ Հանձնաժողովի կողմից Անձին տրված փաստաթուղթ, որը հավաստում է էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնելու և ծառայություններ մատուցելու՝ նրա իրավունքը և պարտականությունը՝ համաձայն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի պահանջների: Լիցենզիայի անբաժանելի մասն են համարվում լիցենզավորված գործունեության իրականացման պայմանները.

Հայտատու՝ սույն կարգի համաձայն Լիցենզիա ստանալու կամ Լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման նպատակով Հանձնաժողով դիմած Անձ.

Հայտ՝ սույն կարգի համաձայն Լիցենզիա ստանալու կամ Լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման համար Հանձնաժողով ներկայացված փաստաթղթերի փաթեթ.

Գործ՝ Անձի անվանական թղթապանակ, որը պարունակում է սույն կարգով սահմանված՝ Լիցենզիա ստանալու համար հիմք հանդիսացող փաստաթղթերը, լիցենզավորված գործունեությունն իրականացնելու ընթացքում հայտնաբերված խախտումների և դրանց վերացման վերաբերյալ տեղեկություններ, սակագինը հիմնավորող հաշվարկներ, ֆինանսական հաշվետվություններ և Անձի գործունեությանը վերաբերող այլ անհրաժեշտ փաստաթղթեր.

Լիցենզավորված անձ՝ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի և սույն կարգի համաձայն Լիցենզիա ստացած Անձ.

Լիցենզավորվող գործունեություն՝ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն լիցենզավորման ենթակա գործունեություն.

Որոշում՝ Հանձնաժողովի կողմից «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված իրավասությունների սահմաններում ընդունված իրավական ակտ:

2. Ընդհանուր դրույթներ

2.1 Լիցենզիան տրվում է միայն Անձանց՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության հետևյալ տեսակներն իրականացնելու համար.

1) էլեկտրական կայանների կառուցում կամ վերականգնում,
2) էլեկտրական էներգիայի արտադրություն,
3) էլեկտրական էներգիայի հաղորդում,
4) էլեկտրական էներգիայի բաշխում,
5) էլեկտրական էներգիայի հաղորդման ցանցի կառուցում,
6) էլեկտրական էներգիայի բաշխման ցանցի կառուցում,
7) ջերմամատակարարման կայանների (ներառյալ ջերմային և էլեկտրական էներգիայի համակցված արտադրության կայանների) կառուցում կամ վերականգնում,
8) ջերմային էներգիայի արտադրություն,
9) ջերմային էներգիայի փոխադրում,
10) ջերմային էներգիայի բաշխում,
11) ջերմային էներգիայի փոխադրման ցանցի կառուցում,
12) ջերմային էներգիայի բաշխման ցանցի կառուցում,
13) բնական գազի փոխադրում,
14) բնական գազի բաշխում,
15) բնական գազի փոխադրման ցանցի կառուցում,
16) բնական գազի բաշխման ցանցի կառուցում,
17) էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցում,

18) գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցում,

19) էներգետիկական շուկային ծառայությունների մատուցում (մատուցվող ծառայությունների տեսակները և կառույցների կազմը սահմանում է Հանձնաժողովը):

2.2 Առանց Լիցենզիայի առկայության սույն կարգի 2.1 կետում նշված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներից որևէ մեկն իրականացնելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

2.3 Սույն կարգի 2.1 կետում նշված գործունեության տեսակների համար տրվող Լիցենզիաների գործողության ժամկետները սահմանվում են.

նոր կառուցվող կամ վերականգնվող արտադրական հզորությունների համար՝ ելնելով կառուցման ավարտի կանխատեսվող ժամկետից, էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրության գործունեությունների համար՝ ելնելով արտադրող կայանի հիմնական սարքավորումների ծառայության միջին ժամկետից, եթե Հանձնաժողովի որոշմամբ այլ ժամկետ սահմանված չէ:

2.4 Էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրության Լիցենզիա չի պահանջվում, եթե այդ էներգիան օգտագործվում է բացառապես սեփական կարիքների համար:

2.5 Հայտով Հանձնաժողով դիմած Անձը սեփականության իրավունքով կամ պայմանագրով իր տնօրինության տակ պետք է ունենա Լիցենզավորված գործունությունն իրականացնելու համար անհրաժեշտ գույք:

2.6 Լիցենզիա ստանալու, Լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու կամ Լիցենզիայի կորստի դեպքում Լիցենզիայի կրկնօրինակն ստանալու համար վճարվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով: Պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը համապատասխան Հայտի, իսկ կորստի դեպքում՝ Լիցենզիայի կրկնօրինակն ստանալու վերաբերյալ դիմումի հետ մեկտեղ ներկայացվում է Հանձնաժողով:

2.7 Լիցենզիան չի կարող օգտագործման տրվել այլ անձանց, օտարվել կամ գրավադրվել՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

2.8 Լիցենզիայի գործողությունը չի տարածվում Լիցենզավորված անձի հետ համատեղ գործունեություն իրականացնող (այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով) այլ Անձանց, ինչպես նաև Լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող Անձանց վրա:

2.9 Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով զբաղվելու իրավունք ունեցող Անձինք կարող են զբաղվել այդ գործունեությամբ Լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից և Լիցենզիայի գործողության ժամկետներում:

3. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՅՏԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

3.1 Լիցենզիա ստանալու համար Անձը Հանձնաժողով է ներկայացնում համապատասխան Հայտ՝ երկու օրինակից, համաձայն սույն կարգի №2 և №3 հավելվածներում նշված փաստաթղթերի և №№ 1, 5-11 հավելվածներով տրված ձևերի:

3.2 Անձը, մինչև սույն կարգի 2.1 կետի 1) և 7) ենթակետերում նշված գործունեությունների վերաբերյալ Հայտը Հանձնաժողով ներկայացնելը, պարտավոր է Հայաստանի Հանրապետությունում երեք ամենամեծ տպաքանակ ունեցող թերթերում հրապարակել համապատասխան գործունեությամբ զբաղվելու մասին իր որոշումը (հավելված № 5):

3.3 Անձը, սույն կարգի 2.1 կետի 1) և 7) ենթակետերում նշված գործունեությունների Լիցենզիա ստանալու համար, պարտավոր է ներկայացնել ֆինանսական երաշխիք՝ ըստ սույն կարգի № 10 հավելվածում սահմանված կարգի:

3.4 Անձը, սույն կարգի 2.1 կետի 1) և 7) ենթակետերում նշված գործունեությունների Լիցենզիա ստանալու համար, պարտավոր է ներկայացնել համապատասխան լիցենզիա ունեցող որևէ նախագծային կազմակերպության հետ կնքված, կառուցվող կամ վերականգնվող օբյեկտի նախագծա-նախահաշվային աշխատանքներ կատարելու պայմանագիր: Պայմանագրում պետք է նշված

լինեն նախագծա-նախահաշվային աշխատանքների իրականացման ժամկետները:

3.5 Լիցենզավորված անձը Լիցենզիայում ամրագրված ժամկետում պարտավոր է, մինչև շինարարական աշխատանքների սկիզբը, համապատասխան փորձաքննություն անցած նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել Հանձնաժողով:

3.6 Հայտատուն, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվության հավաստիության համար:

3.7 Հայտը և նրանում ընդգրկված փաստաթղթերը պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով և սույն կարգով սահմանված պահանջներին:

3.8 Հայտատուի ներկայացրած Հայտը մուտքագրվում է Հանձնաժողովում: Հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանումը ստուգում է Հայտի ամբողջականությունը, նրանում ընդգրկված փաստաթղթերի ձևակերպման ճշտությունն ու համապատասխանությունը սույն կարգի №№ 1-3 և №№ 5-11 հավելվածներին:

3.9 Հայտը չի ընդունվում ուսումնասիրության, եթե՝

ա) նրանում ընդգրկված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով և սույն կարգով սահմանված պահանջներին.

բ) ներկայացված փաստաթղթերում և տեղեկություններում առկա են անճշտություններ և անհամապատասխանություններ.

գ) Հայտատուն օրենքի կամ իր կանոնադրության համաձայն իրավունք չունի զբաղվել հայցվող լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով:

3.10 Հանձնաժողովը Հայտի ստուգման արդյունքների մասին գրավոր տեղեկացնում է Հայտատուին՝ Հայտն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հայտի ստուգման բացասական արդյունքի դեպքում Հայտը սահմանված կարգով պահպանվում է Հանձնաժողովում:

3.11 Հայտատուն, Հանձնաժողովի կողմից Հայտի ստուգման արդյունքում հայտնաբերված թերությունները վերացնելուց և (կամ) բացակայող փաստաթղթերը լրացնելուց հետո« դրանք մուտքագրում են Հանձնաժողովում: Այդ դեպքում Հայտատուն և Հանձնաժողովն առաջնորդվում են սույն կարգի 3.8 - 3.11 կետերով սահմանված պահանջներով և ժամկետներով:

3.12 Հայտի ստուգման դրական արդյունքի դեպքում Հանձնաժողովն սկսում է այն ուսումնասիրելու գործընթացը և կայացնում համապատասխան Որոշում՝ Հայտատուին Հայտի ստուգման արդյունքների մասին գրավոր տեղեկացնելու օրվանից հետո՝ 50 աշխատանքային օրվա ընթացքում:

3.13 Մինչև սույն կարգի 2.1 կետում նշված գործունեությունների Լիցենզիա տրամադրելու վերաբերյալ Որոշում ընդունելը, անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովի աշխատանքային խումբը տեղում ուսումնասիրում է Անձի կողմից կատարված աշխատանքները և համապատասխան գործունեություն իրականացնելու պատրաստականության աստիճանը:

3.14 Հանձնաժողովն իրավունք ունի Հայտատուից պահանջել նաև լրացուցիչ տեղեկատվություն և փաստաթղթեր, որոնց ներկայացման անհրաժեշտության մասին գրավոր տեղեկացնում է Հայտատուին: Այդ գործընթացի համար ծախսված ժամանակը չի ներառվում սույն կարգի 3.12 կետում սահմանված ժամկետում:

3.15 Հանձնաժողովը Հայտը մերժում է, եթե՝

ա) Հայտատուն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անվճարունակ կամ սնանկ է ճանաչված.

բ) Լիցենզավորված գործունեության իրականացումը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության բնական պաշարների անարդյունավետ օգտագործման.

գ) Հայտում բերված տեխնիկական ցուցանիշները չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության տարածքում գործող տեխնիկական կանոնակարգերին.

դ) Լիցենզիա տալու դեպքում սահմանափակվում է մեկ այլ Լիցենզավորված անձին տրված իրավունքը կամ կարող է բացասական ազդեցություն ունենալ նրա գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշների վրա.

ե) Հայտատուն չի ներկայացրել Հանձնաժողովի պահանջած լրացուցիչ տեղեկությունները և փաստաթղթերը կամ լրացուցիչ փորձաքննության (այդ թվում նաև՝ անկախ փորձագետների ներգրավմամբ) եզրակացությունները, որոնց բացակայությունը հնարավորություն չի տալիս շարունակել Հայտի ուսումնասիրությունը.

զ) Հայտատուի ներկայացրած փաստաթղթերը կամ տեղեկությունները թերի են, կեղծ կամ խեղաթյուրված, չեն համապատասխանում ՀՀ օրենքների կամ իրավական ակտերի պահանջներին:

3.16 Հայտի վերաբերյալ Հանձնաժողովի առարկությունները հաշվի առնելուց հետո, Անձը, սույն կարգի 3.1 կետով սահմանված կարգով« կարող է կրկին Հայտ ներկայացնել Հանձնաժողով:

3.17 Հայտի մերժման մասին Հանձնաժողովի Որոշումը չի կարող ազդեցություն ունենալ Անձի՝ հաջորդ Հայտերի քննարկման վրա:

3.18 Արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգման Լիցենզիա ունեցող Անձը մինչև Լիցենզիայի գործողության ժամկետի ավարտը պարտավոր է կատարել կարգաբերման-թողարկման աշխատանքներ՝ համաձայն նախագծի, սարքավորումներ արտադրող գործարանների և տեխնիկական կանոնակարգերի պահանջների: Անձը պարտավոր է այդ աշխատանքներն սկսելուց առնվազն 10 օր առաջ տեղյակ պահել Հանձնաժողովին: Կարգաբերման-թողարկման աշխատանքների արդյունքում հաղորդման ցանց առաքված էլեկտրաէներգիայի հաշվառման և վճարման հետ կապված հարցերը կանոնակարգվում են համապատասխան պայմանագրով, որի օրինակելի ձևը կամ պարտադիր պայմանները սահմանում է Հանձնաժողովը, և որը ենթակա է գրանցման Հանձնաժողովում:

3.19 Հայտատուն սույն կարգի 2.1 կետում նշված (բացառությամբ 1), 5), 6), 7), 11) 12), 15), 16) ենթակետերի) գործունեությունների Հայտի հետ մեկտեղ

ներկայացանում է նաև սակագնի սահմանման հայտ՝ Հանձնաժողովի սահմանած ձևերով և կարգով :

3.20 Հանձնաժողովը սույն կարգի 2.1 կետում նշված (բացառությամբ 1), 5), 6), 7), 11), 12), 15), 16) ենթակետերի) գործունեությունների Լիցենզիաներ տրամադրելու և էլեկտրական, ջերմային էներգիայի արտադրության, հաղորդման (փոխադրման), բաշխման, բնական գազի հաղորդման (փոխադրման), բաշխման, համակարգի օպերատորի, էլեկտրաէներգետիկական շուկային ծառայությունների մատուցման սակագնի սահմանման վերաբերյալ Որոշումներն ընդունում է միաժամանակ:

4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

4.1 Հանձնաժողովում յուրաքանչյուր Լիցենզավորված անձի համար վարվում է հաշվառման գործավարություն և կազմվում Գործ:

4.2 Լիցենզիա տրամադրելու վերաբերյալ դրական Որոշում ընդունելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, Հանձնաժողովը Լիցենզիան՝ մեկ օրինակից, հանձնում է Լիցենզավորված անձին, իսկ նրա չներկայանալու դեպքում՝ Լիցենզիան պահվում է Հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանումում՝ մինչև Լիցենզավորված անձի ներկայանալը:

4.3 Լիցենզիայի հետ մեկտեղ Հայտատուին տրվում են Հանձնաժողովի կողմից սահմանված Լիցենզավորված գործունեություն իրականցնելու պայմանները:

4.4 Հայտատուի ստորագրությամբ Լիցենզիայի ստացման կտրոնը (հավելված № 4) պահվում է Հանձնաժողովում:

4.5 Լիցենզավորված անձի կողմից Լիցենզավորված գործունեությունը դադարեցնելու կամ նրան Լիցենզիայից զրկելու դեպքերում Գործը սահմանված կարգով պահվում է Հանձնաժողովում:

4.6 Հայտի մերժման դեպքում, Որոշումն ընդունելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, Որոշման պատճենը ուղարկվում է Հայտատուին, որում նշվում են մերժման պատճառները:

4.7 Լիցենզիայի պայմանները խախտելու դեպքում Հանձնաժողովն իր սահմանած կարգով կիրառում է «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով նախատեսված տուժանքները:

4.8 Լիցենզիայի պայմաններում փոփոխություն կատարելու անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովը և Լիցենզավորված անձը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածով և Հանձնաժողովի ընդունած համապատասխան իրավական ակտով:

4.9 Հանձնաժողովում վարվում է Լիցենզավորված անձանց և տրված Լիցենզիաների գրանցամատյան:

4.10 Լիցենզավորման գործընթացին առնչվող Հանձնաժողովի Որոշումները ծանոթանալու նպատակով պետք է մատչելի լինեն ցանկացած շահագրգիռ անձի համար, եթե դրանք չեն պարունակում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պետական, ծառայողական կամ առևտրային գաղտնիքներ:

5. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԿՈՐՍՏԻ ԴԵՊՔՈՒՄ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ ՍՏԱՆԱԼԸ

5.1 Լիցենզիայում ամրագրված ժամկետը երկարաձգելու անհրաժեշտության դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է մինչև Լիցենզիայի գործողության ժամկետի ավարտից առնվազն 30 օր առաջ, Հայտով դիմել Հանձնաժողով:

5.2 Լիցենզավորված անձը Հայտում պետք է նշի հայցվող ժամկետը: Հայտն իր մեջ պետք է պարունակի պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը, Լիցենզավորված անձին գրանցող պետական լիազորված մարմնի՝ Լիցենզավորված անձի կանոնադրությունում կատարած փոփոխություններն ու դրանց մասին տեղեկանքը և Լիցենզիայի ժամկետի երկարաձգման անհրաժեշտությունը հիմնավորող համապատասխան փաստաթղթեր:

5.3 Լիցենզավորված անձի ներկայացրած Հայտը մուտքագրվում է Հանձնաժողովում: Հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանումը

ստուգում է Հայտի ամբողջականությունը և նրանում ընդգրկված փաստաթղթերի ձևակերպման ճշտությունն ու համապատասխանությունը սույն կարգի 5.2 կետի պահանջներին:

5.4 Հայտը սույն կարգի 5.2 կետի պահանջներին չհամապատասխանելու դեպքում նրա հետագա ուսումնասիրությունը դադարեցվում է, որի մասին Հանձնաժողովը գրավոր տեղյակ է պահում Լիցենզավորված անձին՝ Հայտն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում:

5.5 Հայտի վերաբերյալ Հանձնաժողովի առարկությունները հաշվի առնելուց հետո, Լիցենզավորված անձը, սույն կարգի 5.2 կետով սահմանված կարգով, կրկին Հայտով կարող է դիմել Հանձնաժողով, բայց ոչ ուշ, քան նախկինում տրված Լիցենզիայի գործողության ժամկետը լրանալուց 10 օր առաջ:

5.6 Հայտը սույն կարգի 5.1 և (կամ) 5.5 կետերով սահմանված ժամկետում ներկայացնելուց հետո, մինչև Լիցենզիայի գործողության ավարտը, Հանձնաժողովն ընդունում է Որոշում:

5.7 Հանձնաժողովն իրավունք ունի Հայտատուից պահանջել նաև լրացուցիչ տեղեկատվություն և փաստաթղթեր, որոնց անհրաժեշտության մասին գրավոր տեղեկացնում է Հայտատուին:

5.8 Հայտը մերժվում է, եթե՝

ա) Հայտատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են, կեղծ կամ խեղաթյուրված: Փաստաթղթերը թերի լինելու հիմքով Հայտը մերժվում է, եթե այդ մասին Հանձնաժողովի նախազգուշացումը ուղարկելու օրվանը հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում Հայտատուն չի ներկայացնում սույն կարգի 5.2 կետում սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը.

բ) ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում սույն կարգի և ՀՀ օրենսդրության պահանջներին.

գ) Հայտատուն օրենքի կամ իր կանոնադրության համաձայն զրկվել է հայցվող գործունեության տեսակով զբաղվելու իրավունքից.

դ) Լիցենզիան ստանալուց հետո անցած ժամանակաընթացքում փոփոխվել են լիցենզավորման պայմանները.

ե) կառուցման կամ արտադրական հզորությունների վերականգնման Լիցենզիա ստացած Անձը Լիցենզիայով սահմանված ժամկետում գործունեություն չի ծավալել.

զ) Լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ գույքի նկատմամբ Լիցենզավորված անձի իրավունքները դադարել են.

է) Հայտատուն Հայտը ներկայացրել է սույն կարգի 5.1 և (կամ) 5.5 կետերում սահմանված ժամկետից ուշ կամ նախկինում տրված Լիցենզիայի ժամկետը լրանալուց հետո:

5.9 Եթե Հայտը ներկայացվել է Լիցենզիայի գործողության կասեցման ժամանակահատվածում, ապա այն քննարկվում է միայն կասեցման վերացումից հետո:

5.10 Լիցենզիայի կորստի դեպքում Լիցենզավորված անձն այդ մասին հայտարարություն է հրապարակում մամուլում« որից 15 օր հետո դիմում է Հանձնաժողով՝ ներկայացնելով պետական տուրքի վճարումը և նշված հայտարարության հրապարակումը հավաստող փաստաթղթերը: Դիմելու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում Լիցենզավորված անձն ստանում Լիցենզիայի կրկնօրինակը:

7. ՎԵՃԵՐ

Սույն կարգի կիրառման հետ առնչվող վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Դ Ի Մ ՈՒ Մ

Խնդրում եմ տալ Լիցենզիա

_____

(աշխարհագրական տարածքը, մարզը,

լիցենզավորվող գործունեության տեսակը, լիցենզիայի գործողության հայցվող ժամկետը)

ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար:

Հայտնում եմ, որ ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողով ներկայացրած փաստաթղթերում առկա տվյալներն ամբողջական են և հավաստի: Ընկերությունն ուսումնասիրել է լիցենզավորվող գործունեության իրականացման պայմանները և պարտավորվում է, Լիցենզիա ստանալու դեպքում ՝ գործել համաձայն դրանց:

Սույն դիմումին կցվում են՝

1. _____

(փաստաթղթերի անվանումը,) (օրինակների և էջերի քանակը)

2. _____

3. _____

4. _____

5. _____

6. _____

7. _____

8. _____

9. _____

10. _____

_____

_____

11. _____

12. _____

_____

(Լիցենզավորվող անձի անվանումը, հասցեն, հեռախոսը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը

բանկային տվյալները)

Կ.Տ.

_____ _____

(ղեկավարի անունը, ազգանունը) (ղեկավարի ստորագրությունը)

«___»_____200__թ.

Հավելված №2
ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի
2002թ. հունվարի 30-ի №4 որոշմամբ հաստատված
կարգի

Ց Ա Ն Կ

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

	Լիցենզավորվող գործունեության անվանումը / Ներկայացվող փաստաթղթի անվանումը	ՆՈՐ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԿԱՄ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ							
		ԷԼԵԿՏՐԱԿԱՆ (ՆԵՐԱՌՅԱԼ ՋԵՐՄԱՅԻՆ ԵՎ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ) ԿԱՅԱՆՆԵՐ						ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՋԵՐՄԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ	
		Փոքր ՀԷԿ-եր							
		Ջրատարների վրա կառուցվող ՀԷԿ-եր	Գետերի վրա կառուցվող ՀԷԿ-եր	ՀԷԿ-եր /10 և ավելի Մվտ /	ԱԷԿ	ՋԷԿ-եր /ջերմային և էլեկտրական էներգիայի համակցված արտադրություն/	Այլընտրանքային էլ. կայաններ	Կաթսայատներ	Ջերմամատակարարման կայաններ
1	2	3	4	5	6	7	8	9	10
1®	Գործարար ծրագիր	λ	λ	λ	λ	λ	λ	λ	λ
2	Գործունեություն ծավալող ընկերության կանոնադրության և պետռեգիստրի գրանցման վկայականի պատճենները	λ	λ	λ	λ	λ	λ	λ	λ
3	Ջրատարի վարձակալման պայմանագիրը կամ ջրատարին միացման թույլտվությունը	λ	--	--	--	--	--	--	--
4	Հողի և լիցենզավորված գործունեությունը իրականացնելու համար անհրաժեշտ այլ անշարժ գույքի նկատմամբ իրավունքները հաստատող փաստաթուղթ և կառուցվող օբյեկտի տեղակայման վայրի քարտեզը	λ	λ	λ	λ	λ	λ	λ	λ

5	Նախագծային կազմակերպության հետ կնքված պայմանագիր նախագծային – նախահաշվային աշխատանքներ կատարելու վերաբերյալ և դրանց կատարման ժամանակացույց	λ	λ	λ	λ	λ	λ	λ	λ
6⊖	Տեղեկություններ բաժնետերերի և բաժնետոմսերի մասին	λ	λ	λ	λ	λ	λ	λ	λ

1	2	3	4	5	6	7	8	9	10
7	Հատուկ ջրօգտագործման թույլտվությունը	λ	λ	λ	λ	λ	--ΘΘ	λ	λ
8	Ընկերության ընդհանուր բնույթի ֆինանսական հաշվետվությունները (առկայության դեպքում նաև վերջին տարվա ընթացքում կատարված ընկերության աուդիտորական եզրակացության և այլ մարմինների կողմից կատարված ստուգման ակտերի պատճենները)	λ	λ	λ	λ	λ	λ	λ	λ
9Θ	Տեղեկատվություն վարկերի կամ այլ փոխառությունների մասին	λ	λ	λ	λ	λ	λ	λ	λ
10Θ	Հայտարարություն մամուլում	λ	λ	λ	λ	λ	λ	λ	λ
11Θ	Երաշխիքներ	λ	λ	λ	λ	λ	λ	λ	λ
12	Պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթ	λ	λ	λ	λ	λ	λ	λ	λ

Θ - ներկայացվում են ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի սահմանած ձևերին համապատասխան (հավելվածներ N N 6, 5, 8, 9, 10, 11):
ΘΘ- անհրաժեշտության դեպքումկարող պահանջվել:

Հավելված № 3
ՀՀ Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի
2002թ. հունվարի 30-ի №4 որոշմամբ հաստատված
կարգի

ՑԱՆԿ*

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

(բացառությամբ սույն կարգի հավելված №2-ում նշված գործունեությունների տեսակների)

№	ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ / ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրություն/էներգաարտադրանքի և ջերմային էներգիայի համակցված	Էլեկտրական էներգիայի հաղորդման ցանցի կառուցում	Էլեկտրական էներգիայի հաղորդում	Էլեկտրական էներգիայի բաշխման ցանցի կառուցում	Էլեկտրական էներգիայի բաշխում	Ջերմային էներգիայի հաղորդման ցանցի կառուցում	Ջերմային էներգիայի հաղորդում	Ջերմային էներգիայի բաշխման ցանցի կառուցում	Ջերմային էներգիայի բաշխում	Բնական գազի փոխադրման ցանցի կառուցում	Բնական գազի փոխադրում	Բնական գազի բաշխման ցանցի կառուցում	Բնական գազի բաշխում	Էլեկտրաէներգետիկական համակարգի վիճակագրական կառավարման վիճակագրական կառավարում	Գազամատակարարման համակարգի վիճակագրական կառավարում	Էներգետիկական շուկայի ֆառաբուժության մատուցում
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
1	Լիցենզավորվող ընկերության կանոնադրության և պետռեգիստրի վկայականի պատճենները	●	●	●	●	●	●	●	●	●	●	●	●	●	●	●	●
2	Տեխնիկական և բնապահպանական փորձաքննություն անցած նախագիծը և նախահաշիվը	---	●	---	●	---	●	---	●	---	●	---	●	---	---	---	---

3⊖⊖	**Տեղեկություններ բաժնետերերի և բաժնետոմսերի մասին**	●	●	●	●	●	●	●	●	●	●	●	●	●	●	●	●

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
4	**Լիցենզավորվող գործունեության աշխարագրական տարածքը**	●	●	●	●	●	●	●	●	●	●	●	●	●	---	---	---
5⊖⊖	**Լիցենզավորվող գործունեությունն իրականացնելու համար անհրաժեշտ հիմնական և վարձակալված միջոցների ցանկը**	●	●	●	●	●	●	●	●	●	●	●	●	●	---	---	---
6⊖⊖⊖	**Շինարարության ավարտը հավաստող փաստաթուղթ**	●	---	●	---	●	---	●	---	●	---	●	---	●	---	---	---
7	**Պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթ**	●	●	●	●	●	●	●	●	●	●	●	●	●	●	●	●

⊖- սույն ցանկում նշված գործողությունների կարգի լիցենզիաների հայտերի հետ միասին ներկայացվում է նաև ՀՀ Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված «Սակագների սահմանման և վերանայման կարգով» սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը:
⊖⊖- ներկայացվում է ՀՀ Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի սահմանված ձևերին համապատասխան (հավելվածներ N N 6,7,8,)
⊖⊖⊖-գոյություն ունեցող ցանցերի համար չի պահանջվում:
⊖⊖⊖⊖- Հանձնաժողովի կողմից տրված արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման Լիցենզիայի առկայության դեպքում չի պահանջվում:

Հավելված № 4
ՀՀ Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի
2002թ. հունվարի 30-ի №4 որոշմամբ
հաստատված կարգի

ԼԻՑԵԶԻԱՅԻ (ԼԻՑԵԶԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ) ՍՏԱՑՄԱՆ ԿՏՐՈՆ

ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի

200__ թ. _____ «___»-ի №_____որոշում

Լիցենզավորված գործունեության տեսակը՝

_____

_____

Լիցենզիայի գրանցման ամսաթիվը «___»_____200__ թ.

Լիցենզիայի գրանցման համարը №_____

Ստացված էջերի քանակը՝ _____

Տրված է՝

(Լիցենզավորված անձի անվանումը,

հասցեն, հեռախոսը, հեռատիպը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը)

(Լիցենզիա ստացող Անձի անունը, ազգանունը, անձնագրի կամ այն փոխարինող փաստաթղթի սերիան և համարը,

ում կողմից և երբ է տրված)

Լիցենզիան ստացվել է՝

«____»_____200__ թ.

_____

(Լիցենզիա ստացողի ստորագրությունը)

Հավելված № 5
ՀՀ Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի
2002թ. հունվարի 30-ի №4 որոշմամբ հաստատված
կարգի

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

_____

(Լիցենզավորվող անձի անվանումը)

դիմել է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողով՝

_____

(աշխարհագրական տարածքը / քաղաքը, մարզը/,

Լիցենզավորվող գործունեության տեսակը)

ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար:

_____

(Լիցենզավորվող անձի հասցեն, հեռախոսը, հեռատիպը, էլեկտրոնային փոստը, ֆաքսը)

Հավելված № 6
ՀՀ Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի
2002թ. հունվարի 30-ի №4 որոշմամբ հաստատված
կարգի

_____
(ընկերության անվանումը)

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

առ 1_____200__ թ

No	Հիմնական միջոցի անվանումը	Զափի միավորը	Քանակությունը	Տիպը կամ մակնիշը	Օգտակար ծառայության ժամկետը	Հիմնական բնութագիրը **	Շահագործման հանձնման տարեթիվը	Շահագործվում է այո (+) ոչ (-)	Գտնվում է պահեստում այո (+) ոչ (-)	Դուրս գրման ենթակա է թեոչ այո (+) ոչ (-)	Հիմ. միջ. ամորտիզացիայի կիրառվող նորման %	Արժեքը (հազ. դրամ)		Մաշվածությունը (հազ. դրամ)		Հաշվեկշռային արժեքը (հազ. դրամ)	
												վերագնահատված ***	չվերագնահատված	վերագնահատված ***	չվերագնահատված	վերագնահատված ***	չվերագնահատված
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
	Լիցենզավորված գործունեության մեջ ներգրավված																
1	Շենքեր																
1.1																	
2	Կառուցվածքներ																
2.1																	
3	Փոխանցող հարմարանքներ																
3.1																	
4	Մեքենաներ, սարքավորումներ																
4.1																	
5	Տրանսպորտային միջոցներ																
5.1																	
6	Արտադրական գույք, Տնտեսական գույք																
6.1																	
7	Այլ հիմնական միջոցներ																
7.1																	
						Ընդամենը											

*) Ներկայացվում է ըստ ստորաբաժանումների և օբյեկտների:
**) Դրվածքային և անձնագրային հզորությունը (արտադրողականությունը, թողունակությունը), գազատարների և ջերմատարների համար՝ երկարությունը և տրամագիծը:
***) Հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված վերագնահատման արդյունքները:

Ծանոթություն: *1.* ***Տեղեկատվությունը ներկայացվում է նաև մագնիսական սկավառակով:***
2. Նշված խմբավորմամբ ներկայացվում են բոլոր հիմնական միջոցները՝ մեկ առ մեկ:

Ղեկավարի ստորագրությունը **/Անուն, ազգանուն/** Կ.Տ

Հավելված № 7
ՀՀ Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի
2002թ. հունվարի 30-ի № 4 որոշմամբ հաստատված կարգի

Վարձակալության վերցված տեխնոլոգիական և օժանդակ սարքավորումների, տրանսպորտային միջոցների, մեխանիզմների, հաստոցների, շենքերի, շինությունների, կառույցների, բաց տարածքների ցանկը

№	Վարձակալությամբ վերցված միջոցի անվանումը	Մակնիշը	Օգտա-գործման ուղղությունը	Հիմնական բնութագիրը*	Վարձակալության պայմանագրի ժամկետները	Տարեկան (ամսական) վարձավճարի չափը (հազ.դրամ)	Վարձատուի անվանումը վարձակալական պայմանագրի առանձնահատկությունները (լիզինգ, ուղղակի վարձակալություն)
1 1.1	Տեխնոլոգիական սարքավորումներ			Ա			
2 2.1	Օժանդակ սարքավորումներ(կապի միջոցներ, համակարգիչներ, կազմտեխնիկա և այլն)						
3 3.1	Տրանսպորտային միջոցներ և մեխանիզմներ			Բ			
4 4.1	Շենքեր, շինություններ, կառույցներ	չի լրացվում		Գ			
5 5.1	Բաց տարածքներ	չի լրացվում		Դ			

" Ա - դրվածքային հզորությունը (արտադրողականությունը, թողունակությունը), գազատարների և ջերմատարների համար՝ երկարությունը և տրամագիծը

Բ - անձնագրային հզորությունը
Գ - օգտակար մակերեսը
Դ - ընդհանուր մակերեսը

Կ.Տ.

_____ _____

ստորագրությունը հայտատուի անունը, ազգանունը, պաշտոնը

Տեղեկություններ
լիցենզավորվող ընկերության բաժնետերերի և բաժնետոմսերի մասին

Տեղեկություններ բաժնետերերի մասին		
Բաժնետեր (փայատեր)	**Բաժնեմաս (փայաբաժին) (դրամ)**	**(%-ով)**
ԸՆԴԱՄԵՆԸ		
Տեղեկություններ բաժնետոմսերի մասին		
Թողարկման թուլատրված բաժնետոմսեր	**Արժեքը**	**Քանակությունը**

1) շրջանառության մեջ գտնվող բաժնետոմսեր		
2) հետ գնված բաժնետոմսեր		
ԸՆԴԱՄԵՆԸ		

Կ.Տ.

Հայտատուի անուն« ազգանունը« պաշտոնը

ստորագրությունը

Հավելված № 9
ՀՀ Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի
2002թ. հունվարի 30-ի №4 որոշմամբ հաստատված կարգի

_____
Ընկերության անվանումը

Տեղեկատվություն վարկերի կամ այլ փոխառությունների մասին

№	Վարկի կամ այլ փոխառության նպատակը	Վարկի կամ այլ փոխառության աղբյուրը (ֆինանսական կազմակերպության անվանումը)	Վարկի կամ այլ փոխառության ծավալը (հազ. դրամ)	Վարկի կամ այլ փոխառության մարման ժամկետը	Վարկի կամ այլ փոխառության տարեկան տոկոսադրույքը (%)
Կարճաժամկետ վարկեր					
	ԸՆԴԱՄԵՆԸ				
Երկարաժամկետ վարկեր					
	ԸՆԴԱՄԵՆԸ				

«___» _____200__թ. _____
(Ընկերության ղեկավարի Անուն« Ազգանունը)

_____
(ստորագրությունը)

Կ.Տ.

Հավելված № 10
ՀՀ Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի
2002թ. հունվարի 30-ի №4 որոշմամբ հաստատված կարգի

Կ Ա Ր Գ

ՀՀ էներգետիկայի բնագավառում արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգման գործունեության լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքների ներկայացման

Ընդհանուր դրույթներ

Սույն կարգով սահմանվում են «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով սահմանված՝ ՀՀ էներգետիկայի բնագավառում արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգման գործունեության լիցենզիա ստանալու համար տնտեսավարող սուբյեկտների կողմից Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողով (այսուհետև՝ հանձնաժողով) ֆինանսական երաշխիքների ներկայացման ընթացակարգը և ձևը:

1. Ֆինանսական երաշխիք է համարվում սույն կարգին համապատասխան հաշվարկված և ձևակերպված որոշակի գումարը, որը ներկայացվում է էներգետիկայի բնագավառում արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգման լիցենզիա ստանալու հայտով էներգետիկայի հանձնաժողով դիմած անձի կողմից՝ ի վկայություն լիցենզիայի պայմանների պահպանման պատրաստականության և վճարունակության:
2. Լիցենզավորվող անձանց համար ֆինանսական երաշխիքի հաշվարկման բազա է սահմանվում արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգման կանխատեսվող նախագծային արժեքը:
3. Ֆինանսական երաշխիքի մեծությունը սահմանվում է կանխատեսվող նախագծային արժեքի մեկ տոկոսի չափով, բայց ոչ ավելի քան 50000 ԱՄՆ դոլար:

4. Լիցենզավորված անձը սույն կարգով հաշվարկված ֆինանսական երաշխիքի չափով գումարը կանխիկ կամ ոչ կանխիկ մուտքագրում է, Հանձնաժողովի հետ համաձայնեցված, հեղինակավոր բանկի դեպոզիտային հատուկ հաշվին: Երաշխիքային գումարը դեպոզիտային հաշիվ մուտքագրելուց հետո հանձնաժողով է ներկայացվում դեպոզիտային պայմանագիրը և բանկի կողմից տրված երաշխիքային նամակը:

5. Բանկի երաշխիքային նամակում պարտադիր նշվում են՝

ա) բանկի և լիցենզավորված անձի պարտավորությունները՝ առանց հանձնաժողովի որոշման և(կամ) գրավոր թույլտվության նշված դեպոզիտային հաշվեհամարի գումարը չնվազեցնել.

բ) բանկի պարտավորությունը՝ հանձնաժողովի որոշման հիման վրա և նրանում նշված ժամկետում լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում ֆինանսական երաշխիքը ՀՀ պետական բյուջե՝ որպես ֆինանսական տույժ փոխանցելու մասին.

գ) բանկ մուտքագրված գումարի և հետագա փոխանցումների համար տվյալ բանկի պատասխանատվության և երաշխավորության մասին.

դ) դեպոզիտի ժամկետը, որը պետք է համընկնի գործունեության լիցենզիայի ժամկետի հետ.

ե) դեպոզիտային պայմանագիրն ուժի մեջ է մտնում հանձնաժողովի կողմից լիցենզիա տրամադրելու պահից և գործում է մինչև լիցենզիայի գործողության ժամկետի ավարտը:

6. Դեպոզիտային պայմանագիրը և երաշխիքային նամակը ներկայացվում են հանձնաժողով՝ լիցենզիա ստանալու հայտի հետ միասին:

7. Լիցենզավորված անձը կարող է ազատ տնօրինել դեպոզիտային հաշվում պահվող գումարի տոկոսներից առաջացող գումարը:

8. Լիցենզիայի պայմանները լիովին և սահմանված ժամկետներում կամ վաղաժամկետ կատարելու դեպքում հանձնաժողովը, լիցենզավորվող անձի դիմումի համաձայն, կայացնում է որոշում՝ ֆինանսական երաշխիքը լիցենզավորվող անձին վերադարձնելու մասին:

9. Այն դեպքերում, երբ օբյեկտիվ պատճառներով՝ Ֆինանսական միջոցների սղություն և այլն, լիցենզիայի պայմանները սահմանված ժամկետներում չեն կատարվում, հանձնաժողովը, լիցենզավորված անձի դիմումի համաձայն, որպես բացառիկ միջոց, նախահաշվով նախատեսված աշխատանքների ծավալի առնվազն 60 տոկոսի կատարման դեպքում, լիցենզավորված գործունեությունն իրականացնելու նպատակով կարող է ընդունել ֆինանսական երաշխիքը վաղաժամկետ վերադարձնելու մասին որոշում, պայմանով, որ այն կօգտագործվի բացառապես կառուցման (վերականգման) աշխատանքների համար:

10. Սույն կարգով սահմանված ֆինանսական երաշխիքը չի պահանջվում, եթե գործունեության լիցենզիա ստանալու համար լիցենզավորվող անձի կողմից հանձնաժողով է ներկայացվել ՀՀ կառավարության կողմից տրված բյուջետային երաշխավորագիր:

11. Գործունեության լիցենզիա ստանալու համար որպես ֆինանսական երաշխիք կարող է համարվել նաև որևէ հեղինակավոր բանկի, հեղինակավոր ապահովագրական կամ այլ ֆինանսական կազմակերպության, ներդրումային հիմնադրամի կողմից տրված երաշխավորագիրը, որով երաշխավորողը պարտավորվում է լիցենզավորվող անձի կողմից լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում սույն կարգին համապատասխան հաշվարկված գումարը, ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի որոշման հիման վրա, փոխանցել ՀՀ պետական բյուջե՝ որպես ֆինանսական տույժ:

Նշված դեպքերում հանձնաժողովը մանրակրկիտ ուսումնասիրում է հարցը և քննարկում նիստում՝ ընդունելով երաշխավորագիրը որպես ֆինանսական երաշխիք ընդունելու կամ մերժելու մասին մասնավոր որոշում:

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳԻՐ

(փաստաթղթի կազմը և բովանդակությունը)

_____

Կառուցվող կամ վերականգնվող օբյեկտի անվանումը

1. Ներածություն

1.1 Արտադրական հզորության կառուցման կամ վերականգնման նպատակը և սպասվող տնտեսական, սոցիալական և առևտրային արդյունքը:

1.2 Կառուցվող կամ վերականգնվող օբյեկտի ընդհանուր բնութագիրը և տեխնիկատնտեսական ամփոփ ցուցանիշները:

1.3 Տեղեկություններ շինմոնտաժային ծառայությունների շուկայի, հիմնական սարքավորումներ արտադրողների (առաքողների) և դրանց արժեքների մասին:

2. Շուկայի ուսումնասիրություն

2.1 Արտադրանքի(ծառայության) իրացման հնարավորությունները:

3. Հիմնական տեխնոլոգիական և տնտեսական լուծումներ

3.1 Արտադրության (ծառայության) տեխնոլոգիայի և հիմնական տեխնոլոգիական սարքավորումների ընտրության տեխնիկական և տնտեսական հիմնավորումը:

4. Օբյեկտի կառուցման (շինարարության) տարածքը

4.1 Օբյեկտի տեղաբաշխման հիմնավորումը:

4.2 Քարտեզագրական և այլ նյութեր, այդ թվում՝ կառուցվող օբյեկտի տեղաբաշխման սխեման, որի վրա նշված են տրանսպորտային հաղորդակցության ուղիներին և ճարտարագիտական ցանցերին միացման կետերը, օբյեկտի հատակագիծը:

5. Հիմնական շինարարական լուծումներ

5.1 Օբյեկտի շինությունների և կառույցների հիմնական բնութագրերը:

5.2 Կառուցման կամ վերականգնման ժամանակացույցը՝ ըստ փուլերի:

5.3 Նախնական լուծումներ օբյեկտի էներգամատակարարման (սնման), ջրամատակարարման, կոյուղու և այլնի վերաբերյալ:

6. Շրջակա միջավայրի վրա օբյեկտի ազդեցության գնահատումը

6.1 Օբյեկտի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:
6.2 Նախնական բնապահպանական լուծումներ:

7. Ներդրումների արդյունավետությունը

7.1 Կառուցման կամ վերականգնման աշխատանքների արժեքը բացված տեսքով:

7.2 Ֆինանսավորման հնարավոր աղբյուրները և ֆինանսավորման պայմանները (հավելված 9):

7.3 Հիմնական արտադրանքի ինքնարժեքի հաշվարկը:

7.4 Գործունեության հիմնական ցուցանիշների հնարավոր փոփոխությունը հաշվարկային ժամանակաշրջանում:

7.5 Ներդրումների ռիսկի գնահատականը:

7.6 Օբյեկտի նախագծման, կառուցման կամ վերականգնման և նախագծային հզորությամբ գործարկման ժամկետները:

7.7 Անհրաժեշտ այլ տեղեկատվություն:

_____
Ընկերության անվանումը

_____
Ընկերության ղեկավարի անուն« ազգանունը

_____
Ընկերության ղեկավարի ստորագրություն

«____» _____200__ թ.

Կ.Տ.

Սույն փաստաթղթին կցվում է արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործարար ծրագրի մշակման հիմքում դրված հիմնավորող փաստաթղթերը: